

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ ԵՎ ՍԻՄՎՈԼԻԶՄԸ

Հայ պոեզիայի պատմության մեջ Տերյանի ստեղծագործությունը կազմում է մի ամբողջ շրջան, որի ակունքները գտնվում են հայ ժողովրդի հոգեկան և կուլտուրական զարգացման նախընթաց էտապներում և որի ազդեցությունը ակնհայտ է մեր օրերի քնարերգության վրա:

Տերյանը վառ, ինքնատիպ, անկրկնելի մի դեմք է: Նրա ստեղծագործությունը զարգացել է պոետական բարձր կուլտուրայի դրոշի տակ: Նա, հենվելով հայ, ռուս, արևմտաեվրոպական պոեզիայի նվաճումների վրա, հայ բանաստեղծական արվեստը բարձրացրեց մի նոր, փայլուն աստիճանի: Տերյանը հայ քնարերգության մեջ վարպետորեն գործածեց և կատարելագործեց այնպիսի առանձնահատուկ ձևեր, ինչպիսին են սոնետը, տրիոլետը, գազելը: Նա փայլուն կերպով գործնականորեն հերքեց այն սխալ կարծիքը, որ իբր թե հայ բանաստեղծությունը գերազանցապես սիլլաբիկ է: Գործադրելով իր երգերում տոնիկ պոեզիայի սկզբունքները, նա բացեց հայ բանաստեղծական խոսքի, նրա հնչյունականության, երաժշտականության, ուրիշի և հանգի հարուստ հնարավորությունները: Տերյանը մաքրեց գրական լեզուն գավառական բառերից և վուլգարիզմներից, մշակեց, հղկեց այն, որն այսօր կարող է չափանիշ ծառայել հայ գրական լեզվի կուլտուրայի հասակության ու նրբության տեսակետից:

Տերյանի գրական ժառանգության նշանակությունը ավելի լայն է: «Թումանյանից և Բսահակյանից հետո,— գրում է հայ պոետի ժամանակակից ուսումնասիրողներից մեկը՝ Է. Թովչյանը,— Տերյանի գործունեությունը նոր, ավելի բարձր աստիճան էր հայ ժողովրդի բանաստեղծական կուլտուրայի զարգացման մեջ, ոչ միայն իր բովանդակությամբ արտահայտչական հնարքներով, լեզվի մշակությամբ, այլև հայ ժողովրդի կեցության և պատմական զարգացման հեռանկարի նոր ըմբռնումով»:

Տերյանը խանդավառ ընդունեց Հոկտեմբերյան ռևոլյուցիան: Իր վերջին երգերում նա փառաբանեց ազատության կարմիր դրոշը և դարձավ նոր, սոցիալիստական իրավակարգի բոցաշունչ մարտիկը:

1

Լիրիկան հայ պոեզիայի ուժեղագույն և բնորոշ տարրերից մեկն է, որի արմատները գտնվում են հայ ժողովրդական երգերում, նրանց պատմական տրագիգիաներում: Անգամ էպիկական կտավների մեծագույն վարպետ Հովհ. Թումանյանի մոտ զգացվում է լիրիկական տարրի գերիշխումը: Սակայն նա, ինչպես այդ ավելի ցայտուն կերպով կարելի է տեսնել «Փարվանայում» և մանավանդ «Թմրկաբերդի առումը» պոեմում աշխատում է օբյեկտիվիզացիայի հնթարկել հերոսների ասյրումները, ձգտելով լիրիկայի և էպիկական սկզբունքի սինթեզին:

¹ Է. Թովչյան, Վահան Տերյան, Երևան, Հայպետհրատ, 1945, էջ 20:

Այլ է վահան Տերյանը: Նա քնարերգու է: Նրա ստեղծագործության մեջ գերիշխում է լիրիկայի անաղարտ տարրը: Նրա բանաստեղծությունների լիրիկական հերոսի և պոետի անձնավորության մեջ չկա որևէ տարակարծություն: Հեղինակը խոսում է իր անունից, արտահայտում անձնական ապրումներն ու զգացումները:

Նա երգել է իր զգացումների ու խոհերի աշխարհը, սակայն այդ աշխարհը չի սահմանափակված նեղ, հասարակական արձագանք չունեցող սուբյեկտիվ ապրումներով: Տերյանի տխուր մեղեդիներում իր ուրույն արտահայտությունն են դտել հայ ժողովրդի դարավոր տառապանքներն ու վիշտը: «Խղճացեք պոետին,— ասում է Բելինսկին լեռնոտովի մասին,— ավելի շուտ ինքներդ ձեզ, որովհետև ցույց տալով մեզ իր հոգու վերքերը, նա ցույց է տվել մեզ մեր սեփական վերքերը»¹:

Դժվար է ամբողջովին ընդգրկել Տերյանի քնարերգության բովանդակությունը, որոշել նրա սահմանները: Երբ Բելինսկին փորձում է բնորոշել, թե ինչն է պոեզիայի առարկան և առհասարակ ինչ է պոեզիան՝ նա օգտագործում է բազմաթիվ համեմատություններ իր միտքը որևէ կերպ արտահայտելու համար: «Պոեզիան — դրում է ռուս քննադատը,— այդ մանկան անմեղ ժպիտն է, նրա մաքուր հայացքը, նրա զնգուն ծիծաղը ու կենդանի ուրախությունը: Պոեզիան՝ այդ ամաչկոտ վարդագույնն է չքնաղ կույսի այտերին, հեղ փայլն է նրա խոր, ինչպես ծով, ինչպես երկինքը, կապույտ աչերի... Պոեզիան՝ այդ կյանքի փայլուն հաղթանակն է, հանկարծակի մեղ հաճախող բերկրանքը կյանքի... պոեզիան՝ զգացմունքների փոթորիկն է: սիրո կարողությունը, վայելքի հիացմունքը, տխրության քաղցրությունը, տանջանքի բերկրանքը, արցունքի անհաղ ծարավը: այդ ջերմ, կարոտալի ձգտումն է դեպի ինչ-որ մի երկիր, միշտ հրապուրիչ ու դյուրական, բայց միշտ անհաս հեռուներ... Ամբողջ աշխարհը, բոլոր ծաղիկները, գույները, հնչյունները, բնության ու կյանքի բոլոր ձևերը կարող են դառնալ պոեզիայի երևույթներ, բայց պոեզիայի էությունն այն է, ինչ թաքնվում է այդ երևույթներում, ինչ կենդանացնում է նրանց կացությունը, ինչ դյուրում է մեզ իր կյանքի խաղով...»²:

Տերյանի քնարին հատուկ են և՛ զգացմունքների փոթորիկը, և՛ սիրո ուժը, և վայելքի հիացմունքը, և՛ տխրության քաղցրությունը, և՛ տանջանքի բերկրանքը, և՛ արցունքի անհաղ ծարավը և՛ մանավանդ ջերմ, կարոտալի ձգտումը դեպի ինչ-որ հրապուրիչ ու դյուրական երկիր, դեպի միշտ տենչալի ու միշտ անհաս հեռուներ:

Տերյանի սիրտը անհանդիստ է, նա այրվում է անդադար: Տանջում է պոետին «անանց մի կարոտ, մի անհաղ ծարավ»: Այդ տենչանքը «անհուն վիշտը» ու «մորմոքը» մթին իրականության ծնունդ են: Դառնացած կյանքից, հայ պոետը ձգտել է իր ստեղծած «նվիրական երազանքների» վայրը, «դյուրական հովիտը», որը հակադրված է «աշխարհի դեմ, չարի դեմ...»: Այդ միանգամայն հասկանալի ու արդարացի բողոք է դաժան իրականության դեմ: Տերյանի ռեալ տպավորություններն ու ապրումները շաղախված են նրա անհուն տենչերով, նրա ջինջ ու վեհ զգացումներով: Այդ խոր կապը իրա-

¹ В. Г. Белинский, Полное собр. соч., 1954, т. IV, стр. 533.

² Там же, стр. 493—494.

կանոնության հետ առավել ևս զգացվում է հայ պոետի սիրո և բնության երգերում, ուր ամեն ինչ միաձուլվել է լույսի անրջում:

Չնայած տանջանքներին ու տառապանքներին, Տերյանը իր անցած օրերի հուշը, իր տխուր կյանքը բնութագրում է հետևյալ խոսքերով.

...Իմ կյանքը մի նուրբ մշուշ է պատել,
Գուրգուրում է ինձ մի լույս հանգրվան ... (1-ին, 10)
...Կյանքս, նա էլ մի լուսեղեն հերիաթ էր ... (1-ին, 6),
Մի քնքուշ լույս կա իմ հոգու համար (1-ին, 63)

Տերյանին բնորոշ են ծանր ապրումները, սակայն հիմնականում նրա տխրությունը լուսեղ է, որը տալիս է նրա քնարերգությանը էլենդիկ մեղմություն և հարմոնիկ խաղաղություն: Այդ այն մոայլ զգացումը չէ, որ ծնում է լուկ հուսահատություն, հուսալքում. այլ այն նուրբ աշխարհընկալումը, որի խորքում գտնվում է անսահման սեր՝ դեպ մարդիկ ու բնությունը:

2

Պատահական չէ, որ հայ պոետն իր «Երկիր Սայրի» բանաստեղծական շարքի ճակատին դրել է որպես էպիգրաֆ Լերմոնտովի խոսքերը՝ «Սիրում եմ ես հայրենիքը, սակայն տարօրինակ սիրով»...: Տարբեր տարիներում, տարբեր հասարակական պայմաններում, տարբեր հոգեկան դրություններում հայրենասիրական թեման Տերյանի մոտ ստացել է տարբեր երանգավորում: Սակայն, Տերյանը երբեք չի դադարել խորհել հայրենի երկրի ու ժողովրդի վիճակի մասին: Չկա այնպիսի մի շրջան, երբ պոետը եղել է անտարբեր դեպ հայրենիքը: Ավելին՝ հայրենասիրական մոտիվները Տերյանի երգերում տարեց տարի ուժեղացել, ստացել են ավելի պարզ, որոշակի հնչում: Թունու մտքերից, խոհերի կծիկներից խճճված աշխարհի արհավիրքներից ու սարսափներից՝ առաջին համաշխարհային պատերազմի օրերին, պոետը ապաստարան է փնտրել հայրենի ափերում: Մայր հողի ծարավով են տոգորվում Տերյանի վերջին շրջանի տխուր երգերը: Եվ քանի գնում՝ Տերյանի ելեջներում ավելի ուժգին «բաղձալի, լուսավոր ու դյուրեկան է հնչում» հայրենիքի ձայնը: «Հոգնած քայլով» նա վերադառնում է «հայրենի հող», դեպ «քարերը նրա ազնիվ ու հին, խրճիթները ահով նիրհող»: Կարոտագին նա դիմում է հայրենիքին՝

Չբկա քեզնից գերիշ երազ,
Քո անունից անուշ անուն...

Հայրենիքի պատկերը, որը ստացել է Տերյանի մոտ իր պոետական հոմանիշը, նայիրին պատած է լուսեղ տխրությամբ և իմաստությամբ: Տերյանը չի երգում կուրացած ազգայնական զգացումով ու սնապարծությամբ նրա անցյալը: Հայրենի երկրի վիճակը, նրա ժողովրդի անցած պատմական ուղին, նրա անցյալն ու ներկան, խոհեր նրա ապագայի մասին — այս բոլորը դառնում են 1910 թվականների Տերյանի քաղաքացիական քնարերգության հիմնական մոտիվը:

Երբ ազատագրական պայքարը թևակոխեց իր նախասովետական փուլը, Տերյանի քնարերգության մեջ հնչեցին նոր մոտիվներ: Պոետը դուրս եկավ «մենության խավար զնդանից», նոր, թարմ ուժերով ու եռանդով «հզոր ու հպարտ» երգելու ապստամբված ժողովրդի հաղթական երգը: Նա պատ-
րաստ է կոչել «հրեղեն խոսքեր», որ զարթոցնի յուսարացին հզոր շարքերը: Նա կոչ փ անում դեմոկրատիային, բոլոր ճնշվածներին ու հալածվածներին՝ «դուրս թափվել մութ խուցերից, որոտալ որպես հողմ», ոչնչացնելով իր ճա-
նապարհին բռնության կապանքները, կարիքն ու տանջանքը:

Այդ տարիներին Տերյանի քաղաքացիական քնարերգությունը գաղափա-
րապես հարստացավ և դարձավ նպատակասլաց, նա ստեղծեց մարտի ու ցա-
սումի երգեր: Նա փառաբանեց նրանց, որոնք զայրույթով ու սուրբ ատելու-
թյամբ լի՝ քանդում էին հին աշխարհը, ողջունեց ջերմորեն՝ ապստամբված
ամբոխին, որը «կրակի հոսանքով» դուրս եկավ փողոց: Նա սիրեց «երկաթի
օրերի» ահեղադրող շաշունը, վրեժի ու հատուցման փոթորիկը:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ուժեղ ազդեցության տակ Տերյանի պոե-
տական խոսքը դառնում է կրակոտ, հատու ու կտրուկ, նրա բանաստեղծու-
թյունը լցվում է քաղաքացիական պաթոսով: Նա գրում է իր «բանվորական
երգը», նվիրվում նոր կյանք կառուցող, ստեղծագործ աշխատավոր դասակար-
գին: Սրտագին տողեր հյուսեց Տերյանը «անմոռաց Ստեփան Շահումյանի ան-
մահ հիշատակին», հայ ժողովրդի լավագույն, անձնագուհի գավալին, մեծ
լենինի տաղանդավոր, ազնիվ հետևորդին:

Տերյանը անցավ իր ստեղծագործական և գաղափարական զարգացման
բարդ ուղին և, վերջիվերջո, հանգեց սոցիալիզմին: Նա խորապես գիտակցեց
մեծ հոկտեմբերի ազատարար ուժը, նրա հսկայական պատմական նշանա-
կությունը՝ ապագայի համար և իր անհանգիստ սիրտը նետեց ռևոլյուցիայի
բոնկվող բոցերի մեջ:

3

Տերյանի գրական ժառանգության ուսումնասիրության խճճված և դժվա-
րագույն հարցերից մեկն է հայ պոետի կապը սիմվոլիզմի հետ: Այդ խնդրի
շուրջը բավական շատ է գրվել: Հայտնվել են տարբեր կարծիքներ և, վերջի
վերջո, կարծես հաղթահարել է այն տեսակետը, որ Տերյանը սիմվոլիզմի հիմ-
նադիրն է հայ պոեզիայում:

Յուրաքանչյուր ընթերցող, ում մատչելի են Տերյանի քնարի պարզ ու
հստակ հնչյունները՝ անկարող է հաշտվել այդ տարածված կարծիքի հետ: Նա
անշուշտ կմտածի, թե ինչ է հասկանում քննադատությունը, երբ գործածում
է ներկա դեպքում «սիմվոլիզմ» անորոշ, մշուշապատ տերմինը, և եթե նա
ունեցել է որևէ ազդեցություն հայ պոետի վրա, ինչ չափի և ինչ աստիճանի է
այդ ազդեցությունը և ինչումն է նա արտահայտվել:

Մինչ Վ. Բրյուսովի «Հայ պոեզիա» ժողովածուի երևան գալը քննա-
դատությունը գրեթե չի շոշափել այն հարցը, թե ինչ ազդեցություն է ունեցել
սիմվոլիստական ուղղությունը հայ բանաստեղծների վրա: Բրյուսովն առա-
ջինն էր, որ անդրադարձավ այդ պրոբլեմին: Նա, որպես խմբագիր, ինչպես
նաև ժողովածուի մյուս մասնակիցները, որոնց թվումն էին ռուս սիմվոլիզմի
ականավոր ներկայացուցիչները (Բլոկ, Բայլմոնտ, Վյաչ. Իվանով, Սոլոգուբ)

իրենց գրական ելույթներում և թարգմանական աշխատանքներում բնականորեն ջանում էին գտնել հայ պոեզիայում իրենց մոտիկ ու հարազատ մոտիվները։ Այդ հանգամանքն ունեցել է իր հետևանքը։ Ռուս պոետները, որոշ դեպքերում թերևս անգիտակցաբար, թարգմանություններում տվել են սիմվոլիստական գունավորում այնպիսի բանաստեղծությունների, որտեղ չկան սիմվոլիստական աշխարհազգացողության անգամ առանձին տարրեր։ Այդ տեսակետից օրինակ կարող են ծառայել Բսահակյանի ժողովրդական երգերի նմուշները Բլոկի թարգմանությամբ կամ Թումանյանի «Անուշը»՝ Վյաչ. Իվանովի թարգմանությամբ։ Անգամ միջնադարյան հայ քնարերգուների առանձին բանաստեղծությունները ռուս թարգմանություններում ստացել են բնորոշ գծեր, որոնք մոտեցնում են նրանց ռուս պոեզիայի վերջին հոսանքների հետ (օրինակ՝ Քուչակի քառյակները Սոլոգուբի թարգմանությամբ)։

Բացառություն չեն կազմում նաև թարգմանությունները Տերյանից։ Նրան ժողովածուում թարգմանել են Բրյուսովը, Բայմոնտը և Սոլոգուբը։

Տերյանի ռուս տեքստերի ամբողջ ֆոնդից, հաշվի առնելով նաև նոր փորձերը, լավագույնների շարքին է պատկանում հայ պոետի «Տխրությունը» Բրյուսովի թարգմանությամբ։

Դժվար է ժխտել այդ թարգմանության պոետական արժանիքները։ Չկան բովանդակության տեսակետից կոպիտ աղավաղումներ, անճշտություններ։ Սակայն երբ այն համեմատում ենք բնագրի հետ, հայտարարվում են այնպիսի հնչյուններ, որոնք անհարազատ են Տերյանին։

Տերյան — Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքույշ մութի թև,
Մի ըստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով...

Брюсов — Скользящей стопой, словно нежным крылом
шелестя темноты,
Прошла чья-то тень, облекая во мгле
трав белеющий цвет.

Տերյան — Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև,
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

Брюсов — Вечерней порой, легковеющий вздох, что
ласкает кусты.
Виденье прошло, женский призрак мелькнул,
белым флером одет.

Առաջին հայացքից թվում է, որ ռուսերեն տեքստը գրեթե միանգամայն համապատասխան է հայերենին։ Սակայն այդ այդպես չէ։ Ուրիշ զգացումներ, ուրիշ պատկերներ։ Հարցը միայն նրանում չէ, որ Տերյանը երբեք չէր գործածի այսպիսի կամ նման արտահայտություններ՝ «белым флером одет», «облекая во мгле трав белеющий цвет»։ Հայերեն բնագրում և՛ լեզուն, և՛ պատկերներն ավելի սահուն, հասարակ և պարզ են։ Կարևորն այն է, որ ռուսերեն թարգմանության մեջ զգացվում են միստիկայի տարրեր, որ բացակայում են Տերյանի մոտ։ Հայ պոետի «ուրուն», «ստվերը», երազի, «անուրջ կույսի», «ցնորք աղջկա» սինոնիմներ են և զուրկ են «виденье», «призрак» բառերի միստիկական խորհրդավորությունից։ Տերյանի «ուրուն» հեռու է Բրյուսովի «п р и з р а в»-ից, ըստ իրենց բովանդակության, իմաստի, նրանք տարբեր որակներ են, Տերյանի «ուրուն» հնարավոր սահմաններում կոնկրետ է և ունի մարդ-

կային, իրական գծեր «գունատ աղջիկ՝ ճերմակ շորերով»։ Շարժվում է նա «սահուն քայլերով, աննշմար, որպես քնքույշ մութի թև»։ Տերյանի «սովերի», «անուրջ կույսի» փոխարեն՝ Բրյուսովի թարգմանության մեջ երևան է գալիս «ЧЬЯ-ТО ТЕНЬ», լեզվական մի ձև, որը հաճախ է պատահում ուսու սիմվոլիստների բառարանում և որը զգացումին տալիս է միստիկական իմաստ։ Օրինակ՝ Բրյուսովի բանաստեղծություններում՝

... Кто-то во мраке тоскует,
чьи-то рыданье звучат ...

Կամ Բլոկի մոտ ... Кто-то зовет серебристой трубой,
Кто-то бежит озаренной дорогой ...

Մեկ ուրիշ դեպքում Բրյուսովն իր թարգմանություններում մտցնում է Տերյանի պոետիկային խորթ՝ բարդ, բռնագրգռիկ ոճավորումներ, խրթին, դժվար մատչելի պատկերներ։

Տերյան ... Ժամ է, ել նորից, իմ ծիրանավառ,
Զրահավորվիր խանդով խնդագին.
Վառիր երկունքի գիշերում խավար
Հրով մկրատված նայիրյան հոգին...

Բրյուսով — Время! Воспрянь! Жду пурпурно-горящую!
Ревность прими, как доспех богатырскую,
Смело затепли, во мраке таяшуюся,
Огнекрещенную душу наирскую!..

Բրյուսովի և այս թարգմանությունը, եթե վերցնենք այն ամբողջովին, անշուշտ պատկանում է Տերյանի բանաստեղծությունների հաջող թարգմանությունների շարքին։ Բայց արհեստական բարդ ոճի շնորհիվ զգալիորեն տուժել է բնագրի պարզությունը և խճողվել պոետական միտքը։

Զի կարելի հաշվի չառնել նաև պոետական տեքստերի բրյուսովյան անձնական ներրևակման առանձնահատկությունները, երբ խոսքը վերաբերում է, այսպես կոչված, Տերյանի սիմվոլիզմին։ Ժողովածուի ընդարձակ ներածական ակնարկում Բրյուսովը, տալով Իսահակյանի և Տերյանի ընդհանուր բնութագրումը, խտացրել և ուժեղացրել է նրանց ստեղծագործության սիմվոլիստական տարրերը։ Նա անվանել է Տերյանին «սիմվոլիստների աշակերտ», որը կարելի է համարել ճիշտ միայն մասնավորապես, — որովհետև Տերյանի «ուսուցիչները» լայն իմաստով եղել են ոչ ավելի քիչ չափով, քան սիմվոլիստները — Իսահակյանը, Պուշկինը և Լերմոնտովը, Գյոթեն և Հայնեն։ Պոեզիային առհասարակ հատուկ են ստեղծագործական համարձակ թռիչքներ, վառ տենչանքներ։ Պոետը ձգտում է իր ստեղծած լուսե անուրջների, երազների աշխարհը ոչ թե նրա համար, որ նա կանգնած է դուալիստական տեսակետի վրա, այլ այն միանգամայն հասկանալի և պարզ պատճառով, որ նրան, պոետին, իր վեհ գաղափարներով, մաքուր, բարձր զգացումներով և ձգտումներով կյանքը, ռեալ աշխարհը շատ հեռու է թվում մարդկային իդեալից։ Նա չի ընդունում դաժան իրականությունը, որտեղ այնքան տանջանք ու դառնություն կա։ Նրա սրտում ապրում է սուրբ ցասումը, ինչպես, օրինակ, վառ կերպով Լերմոնտովի, Իսահակյանի մոտ դեպի քար, անդուծ աշխարհը։

Պոետի, այսպես կոչված, «փախուստը» իր ստեղծած հեռու լուսե փերը — դա մի բնական ռեակցիա է աշխարհի շարի դեմ: Այս խոհերը զբաղեցրել, տանջել են Դուրյանին և Հովհաննիսյանին, Իսահակյանին և Տերյանին:

Միստիցիզմը որպես ընդհանուր աշխարհայեցողություն բնորոշ չէ Տերյանին: Կյանքից դառնացած լինելը, իրականությունից հեռանալը դեպ անուղիքների լուռ հանգրվանը, երազների լուսե օրրանը — այս հանգամանքը իրավունք չի տալիս մեղադրելու պոետին միստիցիզմի մեջ:

Տերյանը, նամականերից մեկում, պատմելով իր հանդիպումների ու զրույցների մասին Գորկու հետ, բնութագրելով նրան, որպես մի «ազնիվ ու պայծառ» անձնավորություն, գրում է. «Ես ասացի նրան, որ նա միստիկ է (Իհարկե, ոչ սովորական մտքով) և հետո կարծեցի, թե գուցե վիրավորվեց, հարցրի — ասաց «Ի՞նչ եք ասում, ինչո՞ւ, ես ձեզ շատ լավ եմ հասկանում և բոլորովին չեմ վիրավորվում — ինչ էլ որ ասեք», և ես զարմացա նրա համբերատար վերաբերմունքին (երկար կլինի իմ ասածները այստեղ մեջ բերելը) և համեստությամբ...»¹:

Գործածելով «միստիկ» բառը Գորկու նկատմամբ, Տերյանը շտապում է ավելացնել, որպեսզի իրեն սխալ չհասկանան. «Իհարկե, ոչ սովորական իմաստով»: Անշափ հետաքրքրական կլինեի իմանալ պոետի տեսակետը միստիցիզմի նկատմամբ: Դժբախտաբար զրույցի բովանդակությունը նամակում բացակայում է, նա միայն նշում է. «Երկար կլինի իմ ասածները այստեղ մեջ բերելը», որովհետև ներկա դեպքում Տերյանին կառուկ է շեշտել Գորկու համբերատար վերաբերմունքը դեպ ուրիշների կարծիքները և մեծ գրողին հատուկ համեստությունը:

Մերձեցման ընդհանուր կետերը Տերյանի և սիմվոլիստների միջև շատ քիչ են: Ավելին. եթե վերցնենք հայ պոետի ստեղծագործությունը ամբողջությամբ — իր ամենահատուկ գծերով, ապա պետք է ասել, որ Տերյանը ոչ իր քնարերգության բնույթի, ոչ էլ իր աշխարհայեցողությամբ սիմվոլիստ չէ, թեև որոշ շրջանում նրա վրա ազդել են ռուս և ֆրանսիական սիմվոլիստները, առավելապես Վերլենը:

Ինչո՞ւմն է կայանում այդ ազդեցությունը: Նախքան այդ հարցին պատասխանելը՝ փորձենք բնորոշել սիմվոլիզմի ընդհանուր բնույթը:

4

Սիմվոլիզմը, ըստ իր սոցիալական արմատների և գաղափարական էության՝ ռեակցիոն, հակաժողովրդական գրական ուղղություն է, որտեղ իր բնորոշ արտահայտությունն է գտել 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների բուրժուական կուլտուրայի անկումն ու քայքայումը: Սակայն, միաժամանակ անհրաժեշտ է շեշտել, որ սիմվոլիզմը, որպես գեղարվեստական ուղղություն, հակասություններով չի բազմաբարդ մի երևույթ էր: Սիմվոլիզմի ընդհանուր սոցիոլոգիական բնութագրումը, որպես ռեակցիոն գաղափարական ուղղության, իրավունք չի տալիս անտես առնել մասնավորապես ռուս սիմվոլիզմի ներքին էվոլյուցիան, նրա տարբեր տենդենցները, նրա լավագույն ներկայացուցիչների ստեղծագործական դեմքի առանձնահատուկ գծերը, որոնք մոտեցնում են նրանց ռուս գրականության հումանիստական տրագիդիաներին:

¹ «Նորհրդային գրականություն», 1940, № 1 (48), էջ 22:

Անկարելի է հասկանալ սիմվոլիզմը առանց հաշվի առնելու նրա կապը, առնչությունը դարաշրջանի հասարակական կյանքի հիմնական գծին, այլադաս կերպով թեև հետ, երբ բուրժուական կուլտուրան ապրում էր անկումային վիճակ, երբ ուժեղանում են արվեստում անհատապաշտական, միստիկական և հոռետեսական տրամադրությունները: Եվ ուստի սիմվոլիզմի անգամ այնպիսի վառ ու ինքնատիպ դեմքեր, ինչպիսին են Բլոկը և Բրյուսովը, որոնք ապրել են բարդ էվոլյուցիա, վերջին հաշվով հասարակական-քաղաքական կյանքի մղձավանջի ծնունդ են:

Ռուս սիմվոլիզմը չի եղել միապաղաղ մի հոսանք և նա ապրել է իր զարգացման տարբեր փուլերը:

Ալեքսանդր Բլոկի ստեղծագործությունը ուստի պոեզիայի փայլուն էջերից մեկն է: Երկար որոնումներից, տանջալի մտորումներից ու խոհերից հետո նա ընդունել է ժողովրդական ապստամբության անհրաժեշտության գաղափարը, որպես կյանքի հիմքերը փոխելու միակ իրական ճանապարհը: Նա ատել է հին, անարդար ու չար աշխարհը և ողջունել է Մեծ Հոկտեմբերի հաղթանակը:

Բլոկի ստեղծագործության ամենանշանավոր տարիներն անցել են հասարակական կյանքի ռեակցիայի պայմաններում: Գուցե այդ է հիմնական պատճառներից մեկը այն տխուր հանգամանքի, որ ոչ մի ուստի պոետի երգերում չենք գտնի այնքան խոր տրագիկումով գունավորված մոայլ խոհեր, որոնցով շաղախված են Բլոկի ստեղծագործությունների մեծագույն մասը: Պոետի երգերում արտացոլվել է հին աշխարհը, ինչպես Բլոկն է ասում, «սարսափելի աշխարհը» իր անթիվ անարդարություններով ու հակասություններով:

1905 թվականի հասարակական պայքարի վերելքից հետո, ռեակցիայի հաղթանակի սև օրերին Բլոկը գրում է. «Ես տեսնում եմ, որ ժամանակակից կյանքից մինչև իմ մահը ոչինչ չեմ ընդունի, չեմ խոնարհվի նրա առջև: Այդ կյանքի ամոթաբեր կարգերը իմ մեջ միայն զզվանք են ծնում»: Նույն տրամադրությունները նա արտահայտել է իր բանաստեղծություններում, որտեղ զգացվում է, թե ինչպես աճում է ու ամրանում պոետի համակրանքը դեպի ճնշված աշխատավոր մասսաները:

Բլոկը երբեք չհաշտվեց ցարիզմի մոայլ իրականության հետ: Նրա ազնիվ սիրտը բողոքեց սոցիալական կյանքի մեծագույն անարդարության դեմ, երբ աշխատավոր շարքաշ ժողովուրդը տնքում էր աղքատության ու կարիքի, քաղցի ու տանջանքի մեջ:

Գորշ ու տխուր ներկային Բլոկը հակադրել է պայծառ ապագան: Դեռ 1908 թվականին, ռեակցիայի օրերին նա զգացել է ռեվոլյուցիայի կենսարար, կենդանի շունչը, նա հառել է հայացքը դեպի հեռուն՝ կարոտալի հարցմունքով՝

Ե՛րբ պիտի հասկավորվի աքտը,
Շունչ քաշի ժողովուրդը զուրկ...

Ռուս պոետը ականատես եղավ 1917 թվականի պատճառական դեպքերին և ստեղծեց իր նշանավոր «Տասերկու» պոեմը, որտեղ նա գովերգեց սոցիալիստական ռեվոլյուցիան, ողջունեց ժողովրդի ազատագրումը դարավոր լծից:

Բլոկն ապրել է հասարակական լայն կյանքով: Անորոշ, մշուշապատ, շատ հաճախ անմիտ վիճաբանությունները սիմվոլիզմի շուրջը ի վերջո զզվեցրել, զայրացրել են նրան, և 1913 թվականին պոետը ասում է որ օրագրում. «Փա-

մանակ է ազատել ձեռքերս, ևս այլևս դպրոցական աշակերտ չեմ: Այլևս ոչ մի սիմվոլիզմներ — ինքս եմ մենակ պատասխանատու իմ նկատմամբ, միայն ինքս...»¹:

Սովետական իրավակարգի առաջին տարիներին Բլոկը կոչ արեց ռուս մտավորականներին՝ «ամբողջ մարմնով, ամբողջ սրտով, ամբողջ գիտակցությամբ ծառայել ռևոլյուցիային»: Նա, ինչպես նաև Բրյուսովը, հետևեց բոլշևիկներին:

Բրյուսովի և Բլոկի կյանքի անգամ արտաքին որոշ կենսագրական փաստերը, մասնավորապես վերջին տարիների, հիշեցնում են այն ուղին, որ անցել է Տերյանը: Սակայն իր հոգեկան խառնվածքով, գաղափարական ակունքներով, պատմական տրագիգիաներով հայ պոետը կանգնած է եղել ստեղծագործական այլ դիրքերի վրա:

Որո՞նք են սիմվոլիզմի, մասնավորապես ռուս սիմվոլիզմի ամենաբնորոշ գծերը: Անբավարարություն իրական կյանքից, ձգտում դեպի կատարելագործ մի այլ աշխարհ, բնության և սիրո գովերգում, տխուր տրամադրություններ, մոայլ խոհեր մահի շուրջը, — այս բոլոր մոտիվները տարբեր աստիճանի, արտահայտման տարրեր անհատական ձևերով հատուկ են համաշխարհային պոեզիայի շատ ներկայացուցիչների, սկսած բանահյուսության նմուշներից, մինչև մեր օրերի քնարերգությունը: Այդ մոտիվներից շատերը հատուկ են նաև սիմվոլիստներին, բայց նրանք չեն բնորոշում սիմվոլիզմը, որպես գեղարվեստական ուղղություն:

Սիմվոլիզմի ընդհանուր հատկանիշ գծերն են — էսթետիզմ, ծայրաստիճան անհատապաշտություն, միստիկա, էրոտիկա, պեսիմիզմ, մահի գովերգում: Թվարկած գծերից և ոչ մեկը չի կարելի համարել Տերյանի քնարին բնորոշ հատկություններ: Հայ պոետի մոտ կան պատահական տրամադրություններ արտահայտող եզակի բանաստեղծություններ, որտեղ կարելի է տեսնել սիմվոլիզմի ազդեցությունը: Տերյանը մոտ է սիմվոլիստներին գլխավորապես իր տխուր երգերով, որոնք ևս, վերջին հաշվով, իրենց լուսեղ թախիծով հեռու են Մերեժկովսկու կամ Սոլովյովի մոայլ, միստիկական տրամադրություններից:

Ռուս սիմվոլիստներին չհաջողվեց ստեղծել ամբողջական տեսություն: Նրանց ստեղծագործական մանիֆեստները, թեորոտիկ դատողությունները լի են հակասություններով: Այդ ամբողջությունը չկար և՛ իրականության, և՛ աշխարհայեցողության, և՛ աշխարհազգացումի մեջ: Ռուս և արևմտեվրոպական սիմվոլիզմին տիպիկ են մշուշապատ, անորոշ տրամադրություններ:

Սիմվոլիստների քնարերգությունը հարուստ է լույսի ու ստվերի փոխանցիկ գույների խաղով, պատկերների հազիվ նկատելի ուրվագծերով, որոնք կարծես ծնունդ են առել կիսագիտակցության անորոշ մթնոլորտում:

Ուսանողական տարիներին Տերյանը եղել է Մոսկվայի գրական շրջաններում: Նա հաճախել է գրական-գեղարվեստական ակումբը, ուր ելույթներ են ունեցել Բրյուսովը և Բայմոնտը: Նրանք հանդես են եկել և՛ սեփական բանաստեղծություններով, և՛ թարգմանություններով էդգար Պոյից, Բոդլերից, Վերլենից, Ուայլդից:

Տերյանին հետաքրքրել է Բոդլերը, որի արձակ բանաստեղծություններից նա թարգմանել է հայերեն: Այսպիսով, Վերլենի նախորդը և ուսուցիչը որոշ

¹ Дневник Ал. Блока, 1911—1913, т. 1, 1928, стр. 177.

ազդեցություն ունեցել է հայ երիտասարդ բանաստեղծի վրա, սկզբում ռուս սիմվոլիստների թարգմանությունների միջոցով, ապա անմիջապես ֆրանսիական բնագրերից:

Սակայն Տերյանին ավելի մոտ է եղել իր առանձին տրամադրություններով՝ Պոլ Վերլենը: Նա անտարբեր չի եղել ֆրանսիական քնարերգուի լիրիկական փոքրիկ բանաստեղծությունների նկատմամբ, դեպի նրանց մշակված, հղկված, կատարելագործության բարձր աստիճանի հասցրած ձևերը: Պատահական չէ, որ Տերյանը համառորեն փորձել է հայերենի վերածել Վերլենի նշանավոր «Աշնան երգը»: Մնացել են նրա թղթերում այդ բանաստեղծության թարգմանության սևագիր վեց վարիանտները, որոնցից ոչ մեկը չի բավարարել խստապահանջ պոետին:

Տերյանը գրել է իր «Աշնան երգը», որի ճակատին գրված են Վերլենի տողերը.

Il pleure dans mon coeur,
Comme il pleut sur la ville...¹

Վերլենին է հիշում Տերյանը իր վերջին շրջանի բանաստեղծություններից մեկում.

...նույնն է խանութը դեմի,
նույն ցուցանակը հիմար,
նույն մեղմախոս Վերլենի
նրբն ես կրկնում դու համառ...

(3-րդ, 31).

Ռուս սիմվոլիստները ևս բարձր են գնահատել Վերլենի քնարերգությունը: Սակայն նրանք մոտեցել են ֆրանսիական պոետի ստեղծագործությանը այլ տեսանկյունից:

Բլոկը, ի մի բերելով ռուս սիմվոլիստների զանազան կարծիքները, ելրակացնում է. «Դու ազատ ես այս կախարդական և միանգամայն համապատասխան աշխարհում: Ստեղծագործիր, ինչ կամենաս, որովհետև այս աշխարհը պատկանում է քեզ... Հասկացիր, հասկացիր, բոլոր գաղտնիքները մեր մեջ են, մեր մեջ են և մութը, և արշալույսը» (Բրյուսով). «Ըս խորհրդավոր աշխարհի աստվածն եմ, ամբողջ աշխարհը իմ երազներումն է» (Սոլոգուր): Դու գանձի միակ տերն ես, սակայն քո կողքին կան և ուրիշները, որոնք ևս գիտեն այդ գանձի գոյության մասին... Այստեղից — մենք քչերս — գիտցողներս, սիմվոլիստներս...»: Այս դատողություններից հետո Ա. Բլոկը նկարագրում է պոետ-սիմվոլիստների ստեղծագործության էքստազի մոմենտը: Տխուր ու մռայլ են այդ միստիկական ապրումները: Բլոկը խոսում է ինչ-որ «կապույտ կիսամութի», «գծոխքի սև օդի» մասին: Այդ ծանր, խեղդիչ մթնոլորտում ստեղծագործում է պոետ սիմվոլիստը, և, վերջապես, «արվեստի մութ կեսգիշերին» խելագարվում է և խորտակվում²: Այստեղ Բլոկը հիշում է ռուս նկարիչ Վրու-

¹ «Romances sans paroles» — ցիկլից. Տե՛ս՝ Verlaine. Oeuvres poétiques complètes. Paris, 1938, p. 122.

² А. М. Блок, О современном состоянии русского символизма, Аполлон, 1910, № 8, стр. 22, 24—25.

բելի անունը, որի կտավների մոայլ գույներում ևս զգացվում են սիմվոլիզմին հատուկ միստիկական տրագիկ ապրումները:

Դժվար է, ավելին՝ անհնարին է գտնել Տերյանի մոտ սիմվոլիզմի համար բնորոշ այնպիսի գծեր, ինչպիսիք են միստիցիզմը, հոռետեսությունը, էրոտիզմը և այլն: Այդ բացատրվում է նրանով, որ Տերյանը, ինչպես նաև Իսահակ-յանը, պատմական-հասարակական այլ պայմանների ծնունդ են: Այլ են նրանց ստեղծագործության արմատները և խորթ են նրանց համար ղեկադենտ պոետների հիվանդագին, միստիկական ապրումները:

Եթե գաղափարական տեսակետից համեմատաբար հեշտ է նշել սիմվոլիզմի բնորոշ, ընդհանուր գծերը, ապա շահագնաց ղեկարին է, երբ խոսքը վերաբերում է նրա կոնկրետ ներկայացուցիչների ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկություններին:

Որպես գրական-գեղարվեստական ուղղություն՝ սիմվոլիզմը բազմամարդ և բազմատարր մի երևույթ է: Բլոկը երբ խոսում է 20-րդ դարի ոռա պոեզիայի փնտրումների մասին, արդարացիորեն հակաճառում է նրանց. ովքեր փորձում են այդ փնտրումները համեմատել 19-րդ դարի սկզբների գրական շարժման հետ:

Համեմատելով այդ երկու դարաշրջանների գրական շարժումները՝ պետք է ընդունել, որ 20-րդ դարի սկզբի պատկերը Ռուսաստանի պայմաններում շատ ավելի բարդ է: Այդ բարդությունը խորապես ազդել է սիմվոլիստների լեզվի, պոետիկայի, ոճի առանձնահատկությունների վրա: Անգամ խոշորագույն ոռա սիմվոլիստների երկերում հաճախ պատկերների կուտակումը և բարդացումը հասցրած է այն աստիճանի, որ պոետական միտքը դառնում է մութ, անհասկանալի:

Плачет ребенок. Под лунным серпом
Тащится по полю путник горбатый,
В роще хохочет над круглым горбом
Кто-то косматый, кривой и рогатый...

В роще косматый беззвучно дрожит,
Месяц упал в озаренные злаки,
Плачет ребенок. И ветер молчит.
Близко труба. И не видно во мраке.

Ա. Բլոկի այս տողերում, որոնք արդյունք են ծանր, հիվանդագին զգացումների և լեցուն են ուրվականներով, ղեկարությամբ կարելի է նկատել առանձին պատկերների հազիվ նկատելի, անորոշ, խաբուսիկ ուրվագծեր:

Բլոկն իր բանաստեղծությունների լեզվի ոչ-պարզության, անորոշության, մշուշապատ լինելու մասին գրում է Ջ. Գիպպիուսին. «Չկարծեք, թե ես դիտմամբ մշուշապատ եմ արտահայտվում: Ես բոլորովին անկարող եմ (ֆիզիկապես հնարավորություն չունեմ) այդ բոլորին տալ որոշակի ձև. և ասել որևէ բան որոշ՝ նշանակում է ստել»: Այս տեսակետից բնորոշ են նրա հետևյալ տողերը.

... Похоронят, зароят глубоко,
Бедный холмик травой порастет,
И услышим: далёко, высоко
На земле где-то дождик идет...

Կամ՝

... Ложась в снеговую постель,
Услыхал заключенный в гробу,
Как вдали запевала метель,
К небесам подымая трубу...

(1903)

Կարելի՞ է արդյոք ենթադրել, որ նման կամ մոտիկ այդ զգացողության և պատկերավորման ծնունդ կարող են հանդիսանալ Տերյանի տխուր, բայց միանգամայն հասարակ ու պարզ տողերը.

...Իմ գերեզմանին գուր չմոտենաք,
Թողեք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,
Թողեք, որ լինեմ հեռավոր, մենակ,—
Զրգգամ, որ կա սեր, և ցնորք, և լաց...

(1-ին, 40).

Տերյանի բանաստեղծություններին հատուկ են զգացմունքի անաղարտությունը, ամբողջականությունը, պատկերների ներքին միասնականությունը: Նրանց հղկված, ավարտված պոետական ձևը համապատասխանում է հարմունիկ տրամադրությանը.

Լեմեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես, մնաս բարով,
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես, մնաս բարով,
Ընաք բարով, ասում եմ ես բոլոր մարդկանց՝ չար ու բարի,
Տանջվող ու որբ աղամորդուն ասում եմ ես, մնաս բարով:
Ընաք բարով, ասում եմ ես ընկերներին՝ մոտ ու հեռու,
Ոսոխներին՝ չար ու արթուն, ասում եմ ես, մնաք բարով:
Երկնի մովին, կանաչ հովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լույս ոլորտում, ասում եմ ես, մնաք բարով:
Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտուտներին ոսկի արտում, ասում եմ ես, մնաք բարով:
Մաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն, ասում եմ ես, մնաք բարով,
Դնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու.
Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք բարով...

(3-րդ, 37).

Այս բանաստեղծությունը աչքի է ընկնում պատկերների, մտքերի, զգացումների ամբողջականությամբ և ներդաշնակությամբ:

Ռուս սիմվոլիստների աշխարհայեցողության, պոետական աշխարհընկալման առանձնահատուկ գծերը կարելի է տեսնել նաև նրանց պատկերավոր լեզվի արտահայտություններում, մակդիրներում, համեմատություններում: Նրանք սիրում են գործածել հազվագյուտ, խրթին, դժվար հասկանալի բառեր, արտահայտություններ, պատկերներ: Նրանց լեզվին բնորոշ են ընդգծված օրիգինալ, սուրյեկտիվիզմով զուգավորված մետաֆորները, համեմատությունները, պատկերավոր արտահայտությունները.

Բրյուսովի մոտ.

ա) .Дремлет Москва, словно самка спящего страуса...*

բ) .Фонари, не мигая горели, как горящие головы

темных повешенных....

Բլոկի մոտ.

ա) «Скамья ладья красна от крови
Моей растерзанной мечты...»

բ) «На красной полоске зари
Беззвучный качается хохот...»

գ) И перья страуса склоненные
В моем качаются мозгу...

Թերևս առանձին դեպքերում թարմ և համարձակ թվան ոռւս սիմվոլիստների առանձին համեմատությունները, վառ և ուժեղ առանձին պատկերները. այդ այլ խնդիր է: Ուսկայն նրանք, ըստ իրենց բնույթի, խորթ են Վահան Տերյանի պոետիկային: Այլ են նրա էսթետիկական չափանիշները: Համեմատություններում Տերյանը հարազատ ու հավատարիմ է իր սկզբունքներին՝ լեզվի հստակությանը, պարզությանը, նրբությանը.

Ի ու գնում ես՝ չգիտեմ ուր,
լուռ ու տխուր,
Հեզ գունատվող աստղի նման,
Ես գնում եմ տրտում-մենակ
անժամանակ
Ծաղկից ընկած թերթի նման... (1-ին, 18).

Տերյանը սիրում է ընդլայնված, տարածված համեմատություններ, որոնք հյուսվելով օղակ առ օղակ, կազմում են ներդաշնակ բանաստեղծական պատկերներ.

Նա ուներ խորունկ երկնադույն աչքեր,
Քնքույշ ու տրտում, որպես իրիկուն...

Նրա ժպիտը մեղմ էր ու դողդոջ,
Որպես լուսնյակի ժպիտը տխուր... (1-ին, 21).

Արտաքին հայացքից կարող է թվալ, որ միապաղաղ է Տերյանի լեզուն և սահմանափակ պատկերների բազմազանությունը: Բայց այդ միայն արտաքին հայացքից: Նրա հնչուն տողերում թաքնված են լեզվական անչափ հարստություններ: Տերյանը չի սիրում կոպիտ գծեր, արտաքին փայլ, աղմուկ, էֆեկտներ: Նա գերազանցապես մաքուր զգացումների, նրանց նրբին երանգավորումների, նրանց լույսի և ստվերի փոխանցումների խոշորագույն վարպետներից մեկն է: Այս հանգամանքը ստիպել է նրան լեզվի նկատմամբ, բառերի ճիշտ և տեղին գործածելու տեսակետից լինել չափազանց խստապահանք, մշակել, հղկել պոետական խոսքը, հասցնել նրան կատարելագործման բարձր աստիճանի:

Նուրբ ապրումներ, խոր զգացումներ արտահայտելու համար նա գտել է մեղմ ու քնքույշ խոսքեր, նա ստիպել է՝ զգալ հայ պոետական լեզվի կախարդիչ հմայքը, և մենք Տերյանի լեզվի մասին կարող ենք ասել նրա խոսքերով.

Այնքան սրտագին, այնքան փաղաքուշ

Խոսքեր կան լեզվում քո նայիրական... (1-ին, 1950, 301).

Սովորական ծանոթ բառերը Տերյանի երգերում ստանում են իմաստավորման նոր գծեր, նոր նյութանսներ, այլ գունավորում, այլ հնչում: Տերյանի նորմոթությունների մեծագույն մասը վերաբերում է բառի ճիշտ, տեղին գործածելուն: Նա ստիպում է խոսքին լիովին, մինչև վերջ ծառայել իր նպատակներին, որի հետևանքով սովորական բառի հնարավորության շրջանակները լայնանում են, ստանում տարբեր իմաստավորումներ, դառնում բնդունակ արտահայտելու հոգեկան բարդ դրություններ:

Տերյանի պոետական բառարանում տարբեր, հակադիր հասկացողություններ են «քաղցր մութ» և «դառը մութ», «սև տափնապ» և «անուշ տափնապ», «քաղցր ցավ» և «դժկամ ցավ», «վիշտ պայծառ» և «վիշտ մոլեգին», «դառն և խոր տխրություն» և «անուշ տրտմություն», «տխրություն մորմոքուն» և «տրխություն մեղմ ու հստակ»:

Հայ պոետի պատկերավոր արտահայտությունների բնդհանուր բնույթը պայմանավորված է նրա զգացմունքների ու խոսքերի ուրույն բովանդակությամբ: Տերյանը սիրում է գունատ ու նրբին գույներ, մեղմ ու քնքուշ խոսքեր: Որինակ՝ «գիշեր» բառը պատահում է Տերյանի բանաստեղծություններում տարբեր իմաստով, բազմաթիվ նյութանսներով.

Առաջին շարք

«Գիշեր անշող», «խոր գիշեր», «խավար գիշեր», «սև գիշեր»:

Երկրորդ շարք

«Գիշեր անլույս և լուռ», «անվախճան գիշեր», «մեջգիշեր սևավոր», «գիշեր սև ու շարաշք», «մռայլ գիշեր», «գիշեր անգութ ու մթին», «գիշեր դառն ու խոր», «գիշեր ահավոր»:

Առաջին շարքում սովորական էպիտետներ են, գիշերային բնության նկարագրման անհրաժեշտ լեզվական միջոցներ. «անշող», «խոր», «խավար», «սև»: Երկրորդ շարքում «գիշեր» բառը ստանում է տրամադրության համեմատ գունավորում: Գիշերային տեսարանները նկարագրված են մարդկային զգացումների լեզվով՝ «անգութ», «շարաշք», «մռայլ», «դառն», «ահավոր»: Այդ հատուկ է առհասարակ Տերյանի բնության պատկերներին.

«Լացող ամպեր», «մեղմաշունչ մութ», «կիսախավարը քնքույշ», «ծառերը վտիտ», «շար մրրիկներ», «արցունք անձրևող տրտում իրիկուն»:

Տերյանի բառարանը հարուստ է ինքնօրինակ պոետական պատկերներով ու նուրբ արտահայտություններով.

«Ցնորական հուշեր», «լուսե անրջանք», «հուշեր տրտմաշուք», «անուշ մեղմություն», «անուրջների լույս», «թովիչ քնքություն»:

Խոշոր տեղ են գրավում Տերյանի լեզվով հնչյունական-երաժշտական տարրերը.

«Շշուկ պայծառ», «քայլեր փափուկ», «փափուկ շրշուն», «մեղմագին հրգ», «երգ դյութող», «երգ քնքույշ», «անուշ նվագ», «քնքույշ ձայն», «ձայնի նվագը քնքույշ», «մեղմ ու բեկբեկ երգեր», «մեղմադձիկ, լացող, միալար ելեղներ»:

Հաճախ միաձուլ են Տերյանի երգերում հնչյունային-երաժշտական տարրերը տեսողական-զեղանկարչական էլեմենտների հետ.

«Ձայնը անուշ-լուսավոր»
 «Մեղմորեն քայլվածքը նվագուն»
 «Կա խորհրդավոր մի հրապուրանք
 Քո շարժումների անխուս զրույցում»:

Հայ պոետի ամենասիրելի և ամենագործածական բառերին են պատկանում «հանգիստը» և «լուռությունը»:

«Անանց լուռություն», «անանց հանգիստ», «լուռություն անսահման», «խաղաղություն անեզերք»:

Չնայած այն հանգամանքին, որ Տերյանի քնարերգության բովանդակությունն են կազմում, ըստ իրենց բնույթի, բարդ զգացումներ և ապրումներ, հայ պոետի լեզուն զարմանալիորեն պարզ է ու մաքուր: «Ես Տերյանին ծանոթ չէի տակավին,— գրում է իր հիշողություններում Ստ. Զորյանը,— երբ առաջին անգամ կարդացի նրա «Մթնշաղի անուրջները»: Նրա այդ փոքրիկ լիրիկական ժողովածուն ինձ՝ գավառական պատանուս վրա բոլորովին նոր, անսովոր տպավորություն արավ թե իր թարմ պատկերներով և թե հղկված ու հստակ լեզվով: մի լեզու, որ բոլորովին նման չէր մինչ այդ եղած մեր պոետիկ լեզվին — այնքան հեռու էր գավառական երանգից և այնքան նուրբ ու պայծառ, որն ստեղծվել էր կարծես սրտի, հատկապես նվիրական, ինտիմ զգացմունքներն արտահայտելու համար: Նա ինձ թվում էր մի այլ աշխարհի լուսեղեն լեզու»¹:

Տերյանի պոետական լեզվին բոլորովին խորթ են, բռնազբոսիկ, հնարավորաբանական պատկերներ, բարդ ոճավորումներ, ճոռոմ արտահայտություններ: Տերյանի լեզվի ընթացքը բնական է և սահուն: Նուրբ երաժշտականությունը նրա պոետական ոճի առանձնահատուկ, բնորոշ գիծն է:

Բելինսկին առաջինն էր, որը պոեզիայի բնույթի խոր հասկացողությամբ նշեց այն նշանակալից հանգամանքը, որ Պուշկինի քնարական բանաստեղծություններին շատերի վերնագիրը փոխարինվում է առաջին տողով, որ նրանք անվերնագիր են: Դա պատահական և լուրջ արտաքին երևույթ չէ: «Այդ,— ասում է Բելինսկին,— լիրիքական երգերի հատկությունն է, որոնց բովանդակությունը աննշմարելի, աննկատելի (неуловимо) է բնորոշման համար, ինչպես երաժշտական զգացումը»: Նույնը նշել է Պ. Ի. Չայկովսկին, որը գրում է Ն. Դ. Ֆոն-Մեկկին այն մասին, որ Պուշկինը հաճախ դուրս է գալիս բանաստեղծության նեղ ոլորքներից դեպ երաժշտության անսահման շրջանը»:

Բելինսկին Պուշկինի «Հեռու հայրենի ափերի համար թողնում էիր դու երկիրը օտար...» նշանավոր բանաստեղծությունը համարելով լիրիզմի էության փայլուն օրինակ՝ գրում է. «Այդ սրտի մեկոդիան է, հոգու երաժշտությունը, անկարագրելի մարդկային լեզվի միջոցներով...»:

Տերյանի բանաստեղծություններից շատերը նույնպես անվերնագիր են, որի պատճառը պետք է փնտրել արտահայտված լիրիկական տրամադրություններում: Նրա քնարերգության երաժշտականությունը վերաբերում է ոչ միայն պոետական ձևին, լեզվի հնչյունականությանը, ուրիշի և հանգի հարստությանը, այլև բանաստեղծություններում արտահայտված զգացումների բնույթին:

Տերյանի «շշուկ և շրշունի» երաժշտականությունը կայանում է ոչ նրանում միայն, որ նա, «ականջ է շոյում», այլ նրանում, որ նա նախ ընթերցողի

¹ Ստ. Զորյան, Վահան Տերյան (հատվածներ իմ հուշերից), «Գրական թերթ», 1940, 10 հունվարի, № 1 (251):

սիրտն է հուզում իր զգացմունքի քնքշությամբ, անկեղծությամբ ու խորությամբ: Այդ բանաստեղծության հնչյունական ձևը միանգամայն համապատասխան է և ներդաշնակ արտահայտված նրբին տրամադրությունը, որն ըստ իր բնույթի երաժշտական է: Այստեղ մենք հանդիպում ենք պոեզիայի այն բարդ երևույթին, երբ բովանդակությունը և ձևը միանգամայն միաձուլվ են, անբաժան:

Աշնան մշուշում՝ շշուկ ու շրշուկ,
Բարդիններն են բաց պատուհանիս տակ,—
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:

.....
Ամպերը ճերմակ երամով անցան,
Թռչունների պես,— լուսեղեն երազ,—
Դու ես, որ դարձյալ ժպտացիր անձայն
Քո հեռու հեռվից անհայտ ու անհաս...

Տերյանին բնութագրելիս պետք է հիշել նրա ստեղծագործության տիպիկ, առանձնահատուկ գծերը, որոնք բնորոշում են նրան որպես բանաստեղծական, վառ, ինքնօրինակ դեմք: Ասկայն այդ դեռ չի նշանակում, որ նա ոչ մի առնչություն, ոչ մի կապ չի ունեցել 20-րդ դարի սկզբում ռուս պոեզիայում գերիշխող դրական-գեղարվեստական այնպիսի մի ուժեղ հոսանքի հետ, ինչպիսին է սիմվոլիզմը:

Ռուս սիմվոլիզմի խոշորագույն ներկայացուցիչները՝ Վ. Բրյուսովը և Ա. Բլոկը զգալիորեն հաղթահարել են սիմվոլիստական աշխարհայեցողության սահմանափակությունը, նրա հետադիմական գծերը և իրենց լավագույն բանաստեղծություններում հասել են գեղարվեստական ճշմարիտ բարձունքներին:

Բլոկի և Բրյուսովի քնարի այն առողջ գծերը, որոնցով նրանք աստիճանաբար հեռացան սիմվոլիզմի հակաժողովրդական ուղղությունից, հատուկ են նաև Վ. Տերյանին: Այդ գծերն են. հումանիստական տրամադրություններ, չար իրականության ժխտում և խոր գիտակցություն, որ նա, ինչպես անվանում է Բլոկը, այդ «սարսափելի իրականությունը» պետք է ոչնչանա,— համակրանք դեպ ընչազուրկ աշխատավոր ժողովուրդը, բողոքի ու ցասումի զգացում անարդարության, բռնապետության դաժանության դեմ, ազատության գովերգում, տխրություն, թախիծ, որոնց հիմնական պատճառը, վերջին հաշվով, աշխարհից անբավարար լինելն է և՛ վերջապես անհագ կարոտ մարդու բարձր կոչմանը արժանի ուրիշ, լուսեղ կյանքի, հարմոնիկ ներդաշնակության, որն ընդունում է պոեզիայում մերթ անհայտ հեռուների, մերթ մշտաշող երկրի, մերթ հավետ կապույտ երկնի, մերթ վեհ ու անհաս լեռնագագաթների պատկերավորումը:

Ժամանակակից ռուս պոետներից Տերյանը ամենից շատ սիրել է Բլոկին և Բրյուսովին. վերջինին նա նվիրել է անկեղծ ու սրտառուչ մի ոտանավոր:

1910-ական թվականների սկզբին Տերյանը մտադիր է եղել ծանոթացնել հայ ընթերցող հասարակությանը ժամանակակից ռուսականավոր պոետների ստեղծագործության հետ: Այդ նպատակով, 1913 թվականին նա թարգմանել է Բրյուսովի բանաստեղծություններից, որոնց մի մասը տպագրվել է Դ. Լևոնյանի «Գեղարվեստ» ամսագրում: Իր փոքրիկ ներածականում Տերյանը բնութագրում է

Բրյուսովին, որպես ռուս նորագույն գրական շարժման խոշորագույն ներկայացուցիչներից մեկը:

Տերյանի նամակները Բրյուսովին՝ ապացույց են երկու պոետների բարեկամական հարաբերությունների: Նրանք ցույց են տալիս, թե ինչպես խոր հարգանք ու սեր է տածել հայ պոետը դեպի, — ինչպես ասել է Գորկին Բրյուսովի մասին, — «Ռուսիայի ամենակուլտուրական գրողը»:

Եթե Տերյանը խորապես զբաղվել է պոետական կուլտուրայի հարցերով, հայտնաբերելով խոշոր պահանջկոտություն դեպի բանաստեղծական խոսքը, եթե նրա քնարերգությունը գերազանցապես տխուր է, եթե նա սիրել է բնությունը, երգել է աշուն ու մշուշներ — եթե նրան հրապուրել են իրիկվա, մթնշաղի մեղմ ու խաղաղ գույները, եթե նա հյուսել է սրտառու սիրո երգեր, եթե նա անգամ անձնատուր է եղել մոայլ խոհերին — այս բոլորը դեռ չի նշանակում, որ նա եղել է սիմվոլիստ:

Ստեղծագործության ընդհանուր բնույթով, իր աշխարհայեցողությամբ, իր աշխարհազգացումով Տերյանին դժվար է համարել սիմվոլիզմի ներկայացուցիչ հայ պոետիայում: Նրա քնարերգության ակունքները գտնվում են հայ լիրիկայի վարդապետ հարուստ տրադիցիաներում:

«Վ. Տերյանի կորուստը, — գրում է Ավ. Խաչակյանը, — հայ գրականության համար չգոցված վերք է: Այնքան թարմ ու այնքան կսկծալի է նրա թանկագին կյանքի վաղահաս բեկումը: Նրա քնարը փշրվեց երգչի ամենափթթուն հասակում, բայց շնայելով դրան, նա մեծ և մնայուն գործ կատարեց հայ պոետիայի վարդապետ նկատմամբ: Նա մի նոր գույնով, մի նոր ձայնով երգեց և սերը, և հայրենիքը, և բնությունը: Նա թարմացրեց հայ պոետիայի և նյութը, և լեզուն»¹:

Տերյանի ամբողջ կյանքը նվիրված էր ճնշող իրականությունից դուրս գալու համար ունի և վճռական ելք փնտրելուն: Տեսնելով ռևոլյուցիայի հրացուքով ուղղված հորիզոնները, նա ամբողջ սրտով ձգտեց նրան, գովերգեց նրան, իր ուժերի վերջին մնացորդները նվիրաբերելով նոր հիմունքներով ժողովրդի ազատ ու երջանիկ կյանքի կառուցման ազնիվ գործին:

¹ Ավ. Խաչակյան, Հավերժ սիրելի Տերյանը, «Գրական թերթ», 1955, փետրվարի 5, № 3 (781):